ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.05.2019
342-38

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն Զոհրաբ Մնացականյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մնացականյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն են դիմել ՀՀ քաղաքացիներ Եվգենյա, Անուշ և Լիանա Դրամփյանները՝ նշելով, որ իրենց տեղեկություն ստանալու հարցումներին լիարժեք պատասխան չեն ստացել: Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք.

1. Տրամադրել այն աղբյուրները, որտեղ առկա են 2018 թ.-ից հետո ՀՀ պաշտոնական դիրքորոշումը մշակութային արտաքին քաղաքականության և դիվանագիտության վերաբերյալ:
2. Խնդրում ենք նշել՝ ինչ կոնկրետ ծրագրեր կան, որոնք հնարավորություն են տալիս հայաստանցի մշակույթային գործիչներին ներկայացնել իրենց ստեղծագործություններն ու կատարումները արտերկրում:
3. Ինչպե՞ս կարող են մշակութային գործիչները ծանոթանալ այդ ծրագրերին և դրանց մասնակցելու ընթացակարգին:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան